<u>Ոչ պաշտոնական թարգմանություն</u>
<u>ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ</u>

Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի
գլխավոր քարտուղար Բարբարա Բերնաթի բաց նամակը
Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ
Արարատ Միրզոյանին
Հայաստանի Հանրապետության կանխարգելման ազգային մեխանիզմի
անկախության վերաբերյալ

Ժնև, մարտի 26, 2021

Հարգելի՛ նախագահ Միրզոյան,

Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիան միջազգային ոչ կառավարական կազմակերպություն է, որի հիմքում «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ ստեղծված՝ խոշտանգումների կանխարգելման միջազգային համակարգն է:

Այս համակարգն իրավունք է վերապահում միջազգային մարմնին՝ ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովին և 90-ից ավելի երկրներում գործող Կանխարգելման ազգային մեխանիզմներին անկախ մշտադիտարկում իրականացնել ազատությունից զրկման բոլոր վայրերում: Մենք սերտորեն համագործակցում ենք ՄԱԿ-ի Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովի և ամբողջ աշխարհում գործող Կանխարգելման ազգային մեխանիզմների հետ՝ հզորացնելու համար այս համակարգը և կանխարգելելու համար խոշտանգումներն ու վատ վերաբերմունքը: Այս համատեքստում, մենք Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի (Կանխարգելման ազգային մեխանիզմի) հետ սերտ և կառուցողական համագործակցության երկար տարիների փորձ ունենք:

Ձեզ եմ դիմում 2021 թվականի մարտի 11-ին ՀՀ կառավարության ներկայացրած՝ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում առաջարկվող փոփոխությունների կապակցությամբ: Հասկանում եմ, որ առաջարկվող փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվելու «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, որով սահմանված է, որ յուրաքանչյուր տարի Մարդու իրավունքների ազգային հաստատության և Կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող

պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից: Ավելին, այս փոփոխությունները նախաձեռնվել են առանց Մարդու իրավունքների պաշտպանի հետ պատշաճ խորհրդակցության կամ քննարկման:

Այս առաջարկները պետք է դիտարկվեն նաև մեզ հաղորդված այլ գործողությունների համատեքստում, որոնք բացասական ազդեցություն են ունեցել Մարդու իրավունքների ազգային հաստատության և Կանխարգելման ազգային մեխանիզմի առկա ռեսուրսների և տեխնիկական կարողությունների վրա, ներառյալ՝ պետական մեքենաների օգտագործման սահմանափակումները, որոնք էական նշանակություն ունեն նրա աշխատանքի, այդ թվում՝ ողջ երկրով ազատությունից զրկման վայրերի արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու հնարավորության համար:

Ինչպես Դուք, անկասկած, տեղյակ եք, 2006 թվականին Հայաստանը միացել է «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությանը, որի 18-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է կանխարգելման ազգային մեխանիզմների արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ միջոցներ և պատշաճ ֆինանսավորում ապահովելու պետությունների պոզիտիվ պարտավորություն:

Փարիզյան սկզբունքների համաձայն՝ ֆինանսական անկախությունը կանխարգելման ազգային մեխանիզմի անկախության հիմնարար պահանջ է: Դա ապահովում է կանխարգելման ազգային մեխանիզմների՝ առանց ավելորդ ճնշման կամ ազդեցության գործառութային և այլ որոշումներ կայացնելու էական կարողությունը: Ինչպես նշում է Միավորված ազգերի կազմակերպության Խոշտանգումների կանխարգելման ենթահանձնաժողովն իր 2010 թվականի կանխարգելման ազգային մեխանիզմների վերաբերյալ ուղեցույցում. ««Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի (Կոնվենցիայի անվանման մեջբերումը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմինն է - խմբ.) կամընտիր արձանագրության համաձայն՝ իր գործառույթներն իրականացնելիս կանխարգելման ազգային մեխանիզմը պետք է ունենա ամբողջական ֆինանսական և գործառութային անկախություն»:

Ներկայում գործող՝ Մարդու իրավունքների պաշտպանին հատկացվող ֆինանսական միջոցների նվազեցման արգելքը լայնորեն ճանաչվել է միջազգային լավագույն փորձ, և մենք այն ընդհանրապես մեջբերում ենք այլ երկրներին ուղղված՝ կանխարգելման ազգային մեխանիզմների հիմնադրման գործընթացին վերաբերող մեր խորհուրդներում: Իրապես, այս և անկախության մյուս երաշխիքներն են, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանին դարձրել են այսքան ուժեղ և վստահելի գործընկեր խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեմ պայքարում: Մեր համագործակցությունը երկար տարիների ընթացքում հիմնվել է կանխարգելման ազգային մեխանիզմի (նկատի ունեն Հայաստանը-խմբ.) անկախության և տեխնիկական (նկատի ունեն մեքենաները - խմբ.) կարողությունների փորձի վրա:

Չնայած շատ պետություններ են բախվում բյուջետային սահմանափակումների, մասնավորապես, նոր կորոնավիրուսային համավարակի (COVID-19) դժվարին ժամանակահատվածում, միաժամանակ, այս ընթացքում է, որ հասարակության առավել խոցելի խմբերը գտնվում են մեծագույն ռիսկի ներքո: Ուստի, էական է, որ նման ժամանակներում նրանց պաշտպանության մանդատ ունեցող հաստատություններին ոչ միայն ցուցաբերվի աջակցություն, այլ նաև դրանք առավել հզորացվեն:

Նշված միջազգային չափանիշների և որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ, որպես անդամ պետություն, Հայաստանի պարտավորությունների լույսի ներքո մենք առաջարկում ենք (recommend) պահպանել «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի գործող 8-րդ հոդվածի 5-րդ մասը՝ որպես Մարդու իրավունքների ազգային հաստատությունների և Կանխարգելման ազգային մեխանիզմների թվում լավագույն փորձ: Միաժամանակ, առաջարկում ենք (recommend) ապահովել, որպեսզի Մարդու իրավունքների պաշտպանի ֆինանսավորման հետ կապված օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ ցանկացած հետագա քննարկում իրականացվի Մարդու իրավունքների պաշտպանի հետ ամբողջական խորհրդակցությամբ:

Մենք հասանելի ենք հետագա տեղեկատվության և քննարկման համար:

Հարգանքով՝ Բարբարա Բերնաթ
Խոշտանգումների կանխարգելման ասոցիացիայի գլխավոր քարտուղար